

որ Փարիզ հարիւրին ութսունը կամ  
իննսունը ասանկ են :

Իսեղճ երիտասարդներ , տգիտութե  
մէջ ուսեալ , ինչպէս ատենօք մեծ բա-  
նաստեղծ մը կ'ըսէր . և թէպէտ իրենց  
բնութիւնը հարուստ և զօրաւոր , բայց  
շատ անգամ դատապարտուած են ծուռ  
և վայրենի դատարակութեամբ մը  
չափաւոր կամ ողորմելի մարդիկ ըլլալ .  
նման այն խեղճ բուսոց որոնք օդէ և  
ազատութենէ զուրկ , և վրանին մտա-  
զիր հոգացող մը չունենալով , ուզեն  
չուզեն ժամանակէ առաջ պիտի ծերա-  
նան և խեղճութեամբ այն խաւար տե-  
ղը թողնին և չորնան :

Բայց սակայն տարիները կ'անցնին  
կ'երթան , ողորմելի տղուն տարիքն ա-  
ռաջ կ'երթայ , միտքն ալ միատեղ . բայց  
այն միտքը ոչ կը թուութիւն կ'առնէ և  
ոչ զօրութիւն . մտաւոր բարոյական  
և կրօնական զարգացումը ամենևին ոչ ,  
կամ թէ ապականեալ : Եւս դժբաղդ  
տղաքներէն աւելի կարեկցութեան ար-  
ժանի բան չկրնար ըլլալ . և վերջը ուր  
կ'երթայ թէ որ մեծ ազգի մը գրեթէ  
բոլոր պատանիները այնպէս ըլլան :

Կ'ոնէ երանի կու տամ անոնց , որոնք

Թերոգէն սկսեալ ինչուան ճարտասանութիւն ,  
մանաւանդ թէ վեցերորդը երկու անգամ ըրեր  
էր : Բայց թշուառաբար ուրիշ բան ընել մտքէն  
չէր անցեր , և մէկն ալ չէր եղած որ իրեն միտքը  
ձգէ , ու սիրտ տայ որ նոյն միջոցին իր ուսմունքը  
ընէ : Իրեն դպրոց մանկու առենը հայրը իրեն  
գրասեղան մը տուեր էր . այս խեղճ գրասեղանը  
հաւատարմութեամբ իրեն հետ ընկերացեր էր  
տարուէ տարի դասէ գաս անցնելու և իր թղթե-  
րուն և գրքերուն պահարան և իրեն միակ աշա-  
կերտակից եղած էր , և անբաժանելի նեցուկ մը ,  
և բնականապէս վարժած էր զանիկայ իրեն ուս-  
մանցը ու յառաջագիմութեանցը նշան սեպել . և  
իրօք երկուքն ալ միատեղ առաջ կ'երթային , այն-  
պէս որ երբ ճարտասանութենէն ելաւ ու փիլի-  
սոփայութիւն մտաւ , պատանին ինքիւրմէն գուրս  
եղած այնչափ ունեցած յաջողութիւններուն վրայ  
իր հօրը դրեց . — Սիրելի հայրիկս , քեզի մէկ նոր  
աւետիս մը պիտի տամ , վերջապէս ահա գրասեղանս  
իւր-իւրոյնս մէջ է :

Եւ ետարանը իրեն պարզ և խորունկ բացա-  
արութեամբ լաւ կը հասկըցընէ թէ մարդկային  
բնութեան համար որչափ հարկաւոր են այս եր-  
կու յառաջագիմութիւնները՝ երբ մանկացելոյն  
Ատուծոյ համար կ'ըսէ . Մանուկս Եթէ՛ր Ե՛ր ԶՕ .  
ԲԱՆԱՅՐ :

այս կերպով ուսեալ , բայց իրենց զօրա-  
ւոր բնութեան կարողութեամբ և կամ  
ընկերական դատարակութեան ընդ-  
հանուր շարժմունքովը , անակնկալ օգ-  
նութիւններ կը գտնան և կը զարգա-  
նան , թէպէտ և ուշ . բայց ինչպէս որ  
ըսի , այդ բանը շատ քիչ կը հանդիպի .  
և ասիէ շատ ծանր և անդարմանելի թը-  
շուառութիւններ կը քաշեն ընտանիք ,  
հայրենիք և բոլոր մարդկութիւնը :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Երբ ազգին հիմակուան վիճակին  
նայելով՝ որ գիտութիւններն , որ լե-  
զուներն , ու որ արուեստներն աւելի  
հարկաւոր ու օգտակար են :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Քանովա Անտոն :

ԻՏԱԼԱԿԱՆ հանձարը ինչպէս որ  
ուրիշ գեղարուեստից մէջ , ասանկ ալ  
քանդակագործութեան մէջ միշտ ե-  
րևելի եղած է , և աս գերազանցու-  
թեան հասուցեր էր Սիլվեյ-Մաչէլց ե-  
րևելի արձանագործը Ժ. Ղարուն մէջ .  
բայց իրեն վերջի տարիները աս արուես-  
տին գեղեցկութեան գաղափարը սկսեր  
էր իյնալ իրեն չճտուողաց ձեռքը :  
Եւսպէս քանի գնաց արձանագործու-  
թեան մէջ կը պակսէր բնական գե-  
ղեցկութիւնը և իմաստասիրութիւնը ,  
որ կատարելագործութիւն տուող հան-  
գամանքներն են . այս անարուեստ վի-  
ճակին մէջն էր արձանագործութիւնը՝  
երբոր անմահ քանդակագործը Վա-  
նովա ծնաւ Սենտիկի սահմանը 1757  
նոյեմբերի 16<sup>ն</sup> Փոսսանեոյ ըսուած գե-  
ղը , վսեմ օրինակ մարդու հանձա-  
րին . և ցցուց իր ջանքովը թէ մարդ-  
կային հանձարը որ աստիճանի կրնայ

բարձրանալ : Վեռ տղայ էր , երբոր որբ մնաց հօրմէն , և իր պապուն խընամբին յանձնուեցաւ , որուն խիստ բընուած ենէն ստիպուելով՝ քանդակիչ գործին առաւ ձեռքը , և սկսաւ աշխատիլ , ուսկից կ'երևնար թէ քիչ ատենի մէջ ինչ մեծ յառաջադիմութիւն պիտի ընէ . տասնըչորս տարուան որ եղաւ՝ իրեն պապը Սենետիկցի Ֆալիեր անունով ատենակալի մը յանձնեց , որ անանկ սէր ձգեց տղուն վրայ՝ որ մէկէն իրեն պաշտպանութեամբ միջակ բայց բարեպաշտ արուեստագիտի մը քովը դրաւ : Ըսկէ իր վարպետովը անցաւ Սենետիկ , և կարգաւորեալ կերպով սկսաւ ուրուագրութեան ու արձանագործութեան վարժութիւն ընել : Եւ թէպէտ նկարչութեան ալ քիչ շատ ետեւ եղաւ , բայց վերջը բոլորովին քանդակագործութեան տալով զինքը՝ աս արուեստին մէջ գերազանցեց : Բայց ասկէ ետքը մեռնելով իր առջի վարժապետը , չկրցաւ գոհ ըլլալ երկրորդին՝ որ աւելի խեղճ արուեստաւոր մըն էր . ուստի կը փափաքէր քովէն ելլել , որ և յաջողեցաւ իր պաշտպանին ձեռքովը , և անոր խընդրովը փորեց երկու արձան Սուրբիկէ ու Որփեսոս , որոնցմէ յայտնի կը տեսնուէր թէ ինչ վսեմ բաներու համար ստեղծուէր է ան հոգին , և ազգին և հայրենեաց փառք պիտի ըլլար , ու վերականգնող աս սքանչելի արուեստին : Ըսպիսի յաջողութենէ մը վերջը վենետիկցի ազնուականաց մէջ բարի նախանձ մը մտաւ , ու մէկմէկէ աւելի կը ջանային աս երիտասարդին գործք յանձնելու , որ արդէն քանի կ'երթար կը ցուցնէր մեծ կատարելութիւն մը ամէն գործոցը մէջ , անանկ որ քիչ ատենուան մէջ՝ բոլոր Իտալիոյ մէջ հռչակեցաւ իր անունը :

Թերևս Վանուլայն գոհ կ'ըլլար Սենետիկ նստիլ , թէ որ փառքէն աւելի իրեն շահը մտածէր . բայց գրեթէ ամէն գեղարուեստից հանձարաւորները փափաք կ'ունենան երթալ հռովմ ու հոն երևելի երևելի հին քանդակաց աստորժակը տեսնել ու զննել : Բազմովին

Վանուլային աս փափաքն ալ յաջողեցաւ . վասն զի հոն տեղի Սենետիկի տէրութեան ղեսպանին և իրեն պաշտպանին օգնութեամբը կրցաւ հռովմ ալ երթալ : Հոն երթալուն պէս՝ գտաւ սկուլտացի Սմիլթրն արձանագործը՝ որ իրեն պէս հին գեղեցիկ աստորժակաց փափաքելով՝ վարժութիւն կ'ընէր , և անոր հետ բարեկամանալով՝ ան վարպետին խորհրդոցը կը հետեւէր իր արուեստին մէջ : Հռովմէն դարձաւ նորէն Սենետիկ՝ քանի մը ձեռքի գործքերը լընցնելու համար , բայց նորէն դարձաւ հռովմ , ուր որ քանդակեց հռչակաւոր արձանակոյտը որ է (Սուսոս Սինոտաւրոսին վրայ յարձրկած , որուն համար ամենէն գովեստ ընդունեցաւ . թէպէտ և իրեն արուեստակիցներուն շատը սկսան աս երիտասարդին վրայ նախանձիլ , ու անոր գործոցը պարսաւ զննել , վասն զի գերազանցեց զամէնքն ալ անհամեմատ կերպով : Ըս անգամ բարեկամացաւ Յովհաննէս Սուլփաթոյ անունով երևելի փորագրողին հետ՝ որուն աղաչանքովը Սուլփաթոս մահարձանը քանդակելը իրեն յանձնուեցաւ , որն որ լընցուց 1787ին , և բոլոր հասկրցողները ծափ զարկին , արուեստակիցներն ալ նախանձով լեցուեցան : Սուլփեր նաև աս վերը բաժ փորագրողին ազջկանը հետ կարգուել , բայց այլ և այլ պատճառներու համար չյաջողեցաւ :

Ըն աստիճանի վառուած էր Վանուլան՝ որ կ'ուզէր իր հանձարովը նոր բստեղծել աս արուեստը . անոր համար մասնաւոր կերպով սկսաւ բնութեան գեղեցկութեանը հետեւիլ , և անոր մէջ ինքը զինքը կը թել : Յանդուգն խորհուրդ . բայց ինքը զինքը յարմար կը տեսնէր աս բանիս , ուստի ան դարուն մարդկանց հակառակ կարծիքէն չխաբուելով , սկսաւ հիներուն արձանագործութեան վրայ տուած պատուէրներովը վարժիլ : Ըս է աս Վանուլայի գործոց մասնաւոր գիւտն ու հոգին , լծող գէլ բնութեան ուսմունքը հնութենէ մնացած քանդակաց հետ , որպէս զի



Քաւովիս Անտոնի :

կարենայ կատարելապէս նորոգել աս արուեստը : Ուստի աս երեւակայութիւն վառուած՝ Նոր Փիղիասայ մը պէս փառք կը ստանար . վասն զի Ղպողոնի հին արձանին քովը կը գնէին իր շինած գերաշխարհիկ գեղեցկագէտ Պերսէոսը և Պարիսի արձանը՝ որ քան զառասպելին ստորագրած գեղեցկութենէն վեր է : Ինքը վսեմ առաքինութեանց ու գեղեցիկ երեւակայութեանց խորհրդաւոր նշանները անձնաւորեց ու կենդանացուց , ինչպէս գեղաճաղիկ մանկութիւնը իրեն Նքէ դիցուհւոյն արձանին վրայ կը տեսնուի , որ թըռչելով կը տանի աստուածոց նեկտարը :

Ըս բոլորին վրան ալ կ'երևնար նոր շնորհք մը , ասոնցմով ոչ միայն արձանագործութիւնը կը ծաղկէր , այլ նաև նորանոր տեսակ ծնունդ մտաց կը տեսնուէր :

Ըս միջոցին մեծամեծ յաղթանակներով կը պայծառանար Նափոլէոն Պոնափարթէ , և ինչպէս որ ինքը մեծամեծ հանձարներուն յարգը ճանչցեր էր՝ ուստի Փարիզ մէկմէկու հետ տեսնուեցան . բայց Քանովային աշխոյժը հայրենիքէն դուրս ամենևին չէր վառէր , և կը գանգատէր որ Նափոլէոն աւեր տարեր էր ամէն երևելի ձեռագործները Ստալիայէն . իրեն համար յատուկ բան չէրն :

դրեց անկէ, հապա միայն յանձնեց իրեն որ հաշտուի Պիոս Է<sup>ի</sup> իր բարերարին հետ . և Վափոլէոն բոլոր ուրիշ իրեն խնդիրներն ալ կատարելով՝ հին հռոմայու փլատակները փորելու համար զինքը գլուխ կեցուց . ուստի աս մեծ արուեստաւորը 1810<sup>էն</sup> Փարիզէն դառնալու ատեն՝ Ֆիորէնցա և հռովմ մեծ ուրախութեամբ ընդունեցան զինքը, ու սէր ցրցուցին արժանաւոր անձին : հռովմ հասածին պէս, սկսաւ նոր արձաններ փորել, Վափոլէոնին և Սոլինկիթոնին, առջինը մարդաչափ, իսկ երկրորդինը հռովմէական պատմութեան հեռանալ : Բայ և այլ կանանց արձաններ ալ քանդակեց, հաւասարելով յունաց արձաններուն : Բայց ինքը մեծ զգացմունք կունենար հռովմայի մէջ ահաւոր արձանները տեսնելով, ու ուզելով նմանիլ անոնց՝ քանդակեց երկու ըմբիշները, զայրացած հեկտորն ու Լաթսը, և երկու արձանակոյտերը՝ Սեպտիմի որ կը նուաճէ ձիացուրը, և կատաղի հերակէսը որ խեղճ Սիկան ոտքէն բռնած կը նետէ, ուր որ Սոփոկղի երեւակայութիւնը կը տեսնուի : Բայ գործքերուս մէջը ուժ կայ և մեծութի գեղեցկութեան հետ մէկտեղ, կատարելութիւն՝ որուն դեռ Խտալացիք չէին հասած իրմէ առաջ . բայց Սիքէլ-Բնաչէլային ահաւոր գրչին չհասաւ . իսկ ինքը գերազանցեց քան զամէն արձանագործները՝ Սեպտիմիի պապին արձանին այնպիսի ջերմեռանդն երես տալով և Սագաղանացոյն արձանին վրայ ալ տեսնուած ցաւով :

Իսկ 1815<sup>էն</sup> Վափոլէոնի իյնալովը՝ ինչպէս բոլոր տէրութիւնք, ասանկ ալ Պիոս Է սրբազան պապը զրկեց զինքը Փարիզ, և աս անգամուան Վանովայի ներկայութիւնը, գաղղիացուց շատ տրհաճութիւն պատճառեց, վասն զի Վափոլէոնի յափշտակած գեղարուեստից հրաշակերտները կ'ուզէր ետ առնուլ . առջի բերան չէին տար իրեն, բայց վերջը ուրիշ տէրութեանց ստիպմամբը առաւ, և Սրբազանին կամքովը Փա-

րիզու արքունեաց Թանգարանին ընծայեց այլ և այլ փառաւոր գործքեր :

Բայց որովհետեւ աս ծախքերը ընելու համար Բնագղիոյ տէրութիւնը զրամական օգնութիւն ըրեր էր Վանովային, և մասնաւորապէս ան ատենուան Բնագղիոյ Թագաւորը, գնաց Սոլտրա իր երախտագիտութիւնը ցուցնելու համար, և Թագաւորէն ալ մեծ պատիւ գտաւ . տեսաւ նաև ու զարմացաւ Պարթենոնի համբաւաւոր արձանները՝ որոնք Բնագղիացիք Յունաստանէն բերեր էին . և հոն ալ իր կարծիքին վրայ հաստատուեցաւ, տեսնելով որ հին ատենի Յոյնք բնութեան գեղեցկութեան կը նմանէին՝ ամենայն կանոնները պահելով, և ամենեւին դաժանութիւն և կամ չափազանցութիւն չէր երևնար անոնց վրայ : Ետ ուրախութեամբ դարձաւ հռովմ, ուր մեծ հանդէս ըրին իրեն . Վահանայապետն ալ իրեն հռովմէական ազնուատոհմութեան պատիւ տուաւ, և մարգիզութեան պատուանուն, և իրեք հազար սկութի եկամուտ կապեց : Վանովան ազնուական խորհրդով մը աս առած ստակը արձանագործութեան կը ծախէր, և այլ և այլ Բնագղեմիաներու և ճարտարարուեստ մարդկանց կ'օգնէր : Բայ միջոցին արագութեամբ կը կատարէր երեւելի Սոլինկիթոնի արձանը Սիպոյեալ նահանգաց հասարակապետութեան համար . քանդակեց Լորքի դքսին իշխանագուն ծիրանաւորին մահարձան մը Սատիկանին համար, և վերջը Բիրոզիտէի և Բրեսի արձանակոյտը և կամ խաղաղութիւնը որ պատերազմին հետ կը հաշտուի :

Բայ միջոցին ընտրուեցաւ նախագահ գեղարուեստից ընդհանուր ժողովոյն, հոս դիտելու բան մը կայ որ Վանովայի անուան մեծութիւն կ'աւելցընէ . Պիոս Է հրամայեց որ իրմէ ետքը ընտրուած յաջորդը աս ճեմարանիս նախագահ չըսուի, այլ փոխանակ նախագահի : Սիկ տարուան միջոցին մէջ մարդաչափ ու անկէ ալ աւելի մեծութեամբ չորս արձանի նախատիպ շինեց . այսինքն Են

դիմին 'ի քուն, պարագլուխ 'Կայազ, նստած ու մարած Սագդաղենացի մը, և ուրիշ Յաւերժահարս մը 'ի քուն: Բայց արուեստագէտները Լնդիմիոնի արձանը ամենէն աւելի գերազանց սեպեցին: Ըստ գործոցը ատեն լընցուց նաև մանուկ սուրբ Յովհաննէս մը իշխանի մը համար, և Պիոս Զ քահանայապետին ծննկան վրայ աղօթող արձանը, որ դրուած է Հռովմայ սուրբ Պետրոսի եկեղեցւոյն մէջ:

Բայց Վանուվային սրտին մէջ ուրիշ վսեմ խորհուրդ մըն ալ կար՝ հայրենեաց և Իտալիոյ սիրոյ յիշատակ մը նուիրել. աս բանիս համար Փոսսանեոյ իր ծննդեան տեղը հոյակապ տաճար մը կանգնեց, իբր 'ի նմանութիւն Պարթենոնի ու Պանթէոնի, որն որ ամէն ուսումնասիրաց հետաքրքրական տեղ մը ձևացաւ: Աւստի սկսաւ աս շէնքը շինուիլ 1819ին, և քանի որ ողջ էր՝ ամէն տարի կուգար այցելութեան. և ասոր համար շինեց գթութեան արձանակոյտը և Սետուպեայ եօթը խորաքանդակները, տաճարին իւրաքանչիւր սեանց մէջ տեղը մէյմէկ հատ դնելու համար, որոնք վերջի գործքերն եղան:

Վանուվան թէպէտ սկսաւ տարիքը առնելով վատուժնալ՝ բայց դեռ աշխոյժը չէր մարած, և բարեկամներն ալ շատ կ'աղաչէին ուրիշ զբաղմանց ձեռք գարնելու. 1822ին գարնան սկիզբն էր երբոր սկսաւ տկարութիւն զգալ, այսու ամենայնիւ գնաց՝ Վեապօլիս գործքի մը համար, բայց շատ ինկաւ, և անկէ Հռովմ որ դարձաւ՝ աս խեղճ վիճակին մէջ լընցուց երկու արձանները Լնդիմիոնի ու Սագդաղենացւոյն: Բայց ալ չկրնալով աշխատիլ՝ քաշուեցաւ իր հայրենիքը՝ ուր որ հասաւ սեպտեմբերի կիսուն. երթալով տկարութիւնը վրան կը կոխէր, երբ Սէնտիկ փոխադրուեցաւ հոկտեմբերի 4ին և հազիւ թէ հասաւ չհասաւ մէկէն սկսաւ սաստիկ փրսխուք մը որ անգողար կը բռնէր զինքը: Թէպէտ և ամենայն կերպով մարդկային հնարքները բանեցուցին իրեն համար, բայց ճար չեղաւ. ուստի վեր-

ջապէս մեռաւ Վանուվան ամենայն հոգւոյ հանդարտութեամբ ու քրիստոնէաբար հոկտեմբերի 13ին առաւօտեան դէմ 1822ին, բոլոր ճանչուորները սգոյ մէջ թողլով: Շատ մեծ ու փառաւոր եղաւ աս մեծ մարդուն յուղարկաւորութիւնը. Սէնտիկի թագաւորական գեղարուեստից Լիադեմիային վարպետներն ու աշակերտներն ուզեցին որ իրենք տանին մեռելին դագաղը Ս. Սարկոսի եկեղեցին. հոն Փիրքէր պատրիարքը իրեն հոգւոյն համար հանդիսաւոր ձայնաւոր պատարագ մատոյց, ուր որ ներկայ էին՝ բոլոր Սէնտիկի սահմանին աւագորեարը, թագաւորական Ղեմարանին անդամները, Լիադեմիային վարպետները, հայկական ճեմարանը, Սէնտիկի Լթենէոնին կաճաւորները և անթիւ քաղաքացիք: Երբոր լընցաւ հանդէսը, յանձնեցին մարմինը իրեն գեղին աւագերիցոյն. և երբոր Լիադեմիային առջևէն կ'անցընէին մարմինը, աշակերտքը ուզեցին որ կեցընեն դագաղը, որպէս զի վերջին սիրոյ ողջոյնն ալ տան ան գեղեցիկ հոգւոյն և հրաշալի մատանցը: Հոն համբաւաւոր Չիքոնեարա հնագէտը սրտաշարժ ու ճարտասան ճառ մը խօսեցաւ, և այն պէս արտասուօք յուղարկեցին մարմինը իրեն հայրենիքը, ուր որ հասածին պէս յունիսի 25ին, հանդիսաւոր պատարագին ատենը՝ Սէնտիկի անցեալ պատրիարքը Սոնիքոյ (որ ան ատենը պարզ աւագերէց էր) դամբանական մը խօսեցաւ սքանչելի պերճախօսութեամբ. հրապարակին մէջը, վասն զի ժամը չէր առնէր այնչափ բազմութիւն մարդկան, և վերջը թաղեցին Փոսսանեոյ իր շինած եկեղեցւոյն մէջ: հոգւոյն համար շատ հանդիսաւոր պատարագներ ընել տուին նաև ուրիշ քաղաքներու ճեմարանները, ինչպէս Վեապօլոյ, Սիլանու ու Քիորէնցայի, և մասնաւոր կերպով Հռովմայ հնագիտական ընկերութեան ճեմարանը այլ և այլ ճառերով իրենց ցաւը ցցուցին այսպիսի մեծահանձար մարդու մը: Սուրբ Պուկասու ըսուած ճեմարանն ալ 'ի յիշա-

տակ անթիւ բարերարութեց որ Վա-  
նուլայէ տեսեր էր՝ հրամայեց որ հասա-  
րակաց յիշատակարան մը կանգնուի :

Բնուական սիրտ ունէր Վանուլան ,  
ընկերասէր , մանաւանդ իր արուեստա-  
կիցները շատ կը սիրէր , և կը ջանար  
որ ծաղկեցընել տայ աս արուեստը իշ-  
խանազանց ձեռքովը : Իր փառացը նա  
խանձոտներուն որ վնասել կը ջանային  
իր համբաւոյն՝ բողբոլին անխառով կը  
կենար . անիրաւութեանց ոչ երբէք պա-  
տասխանեց , և երբոր քննիչները ան-  
կեղծ սրտով կը դատէին իր գործքերը ,  
խելացի պատասխանով ինքը զինքը կը  
պաշտպանէր : Իր արուեստին վրայօք ա-  
ռանց կողմնակցութիւն կը խօսէր , և ու-  
րիշներուն գործքը աւելի կը գովէր քան  
թէ կը պարսաւէր . թէպէտ շատ փառք  
ու պատիւ և հարստութիւն ստացաւ ,  
բայց ոչ երբէք հպարտացաւ անոր հա-  
մար : Եւ հանձար ունենալով՝ լեզու-  
ներ ալ գիտէր խօսել , և նաև ուսմուն-  
քէ ալ աղէկ կը հասկընար , թէպէտ և  
միշտ արձանագործութեան ետևէ էր .  
մէկ կողմանէ կը բանէր , մէկալ կողմա-  
նէ ալ ուրիշի կարգալ կու տար . շատ  
հմուտ էր հնագիտութեան մէջ : Եւ ու-  
ներու ատեն յանձնեց իր եղբօրը որ սկը-  
սած տաճարը առաջ տանի , ինչպէս ան  
ալ ջանքով կատարեց , որն որ Իտալիայի  
հրաշարեաց մէկը կը սեպուի :

Իսկ իրեն սկսած ու չըմբնցած ձեռա-  
գործները չհամրելով , Վանուլան ձգեց  
մեզի բուն յատուկ ձեռօքը շինած 53 ար-  
ձան , 12 արձանակոյտ , 13 հատ ալ նա-  
խատիպը միայն պատրաստեց , 14 շիրիմ ,  
8 հատ մեծ դամբան , 7 հատ մարդա-  
չափէն աւելի մեծ արձան , 2 մեծ ար-  
ձանակոյտ հսկայաձև , 54 կիսարձան՝  
որոնցմէ վեցը հսկայաձև են , 26 խորա-  
քանդակ , որոնցմէ մէկ հատին միայն  
քարէն շինեց . բոլոր լմնցած գործքերը  
կ'ըլլան 175 կտոր բան :

Իրեն աշակերտացը մէջ երևելիներն  
են թմեներանի , Փապրիս , Ռինալտի ,  
Թորվալտսէն , Դանտովէնէկի , Տեր-  
րարի և ուրիշները , որ իրեն դպրոցին  
մեծ պարծանքն եղան , որոնց շատը դեռ

կենդանի ըլլալով՝ անոր ջանքն ու դի-  
տաւորութիւնները առաջ կը տանին ,  
որուն գործոցը փառքը յիրաւի անմահա-  
կան յիշատակաց արժանի է և պիտի  
ըլլայ կըթեալ ազգաց մէջ : Իրեն հա-  
մար շատ արձաններ կանգնուեցան այլ  
և այլ քաղաքներ , բայց ասոնց մէջ ա-  
մենէն երևելին կրնայ սեպուիլ Սե-  
նետիկու գեղեցիկ եկեղեցեաց մէկուն  
մէջ կանգնուած հոյակապ մահարձա-  
նը ուր որ պահուած է իրեն սիրտը սա-  
փորի մը մէջ . իսկ գեղարուեստից Կա-  
դեմիային խորհրդարանին մէջ ալ կը  
պահուի իր աջ ձեռքն ու գրիչը . կար-  
ծես թէ վենետիկեցիք աւելի մէկ կեր-  
պով իրաւունք ունին զինքը իրենց քա-  
ղաքակիցը սեպելու՝ նոյն գաւառին մէջ  
ծնանելուն համար :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Ճեպրնքաց շոգիալար :

ԻՐԱՒ հիմակուան ատենս երկաթ-  
ուղեաց վրայ քալող շոգեկառքերը հրա-  
շալի բաներ կ'երևան մեզի , բայց սա-  
կայն շատ անգամ անօնք ալ իրենց դը-  
ժուարութիւններն ունին . նախ եր-  
կաթուղեաց էական հանգամանք մի է  
որ հորիզոնական գետնի վրայ շինած  
ըլլան . ապա թէ ոչ անհարթ գետնի  
վրայ շինուած ճամբուն ծախքերն ալ  
անհամար կ'ըլլան . պէտք է դիտել զար-  
ձեալ որ այլ և այլ շոգեկառքերու մի և  
նոյն գծի վրայ երթալ գալը անհնար է .  
և ան տեղուանքն ուր որ երկու ուս շի-  
նուած չէ՝ կառքերը չեն կրնար մէկմէ-  
կու հանդիպիլ , բայց եթէ քանի մը ու-  
րոշեալ տեղուանք , ուր որ կողմնական  
ուս շինուած ըլլալով՝ դիմացէ դիմաց  
եկած կառքերուն մէկ խումբը քովի  
ուսին վրայ կ'անցնի կը կենայ , ինչուան  
որ մէկալն իր ճամբէն առաջ երթայ :  
Աստի թէ որ մէկը լաւ քննելու ըլլայ  
այն անհամար ծախքերը որ եղեր են